

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

-172-

ԱԳՀ  
3159

ՀԱՅԿ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹ. ԺՈՂՈՎՐԴ. ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

# ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ



## ՅՐԱԿԱՆԳՆԵՐ

	Եջ
1. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՍԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳ . . . . .	3
2. ԿԱԼՎԱԾԱԹԵՐԹ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳ . . . . .	11
3. ԲՆԱԿՔԱՐՏ . . . . .	22
4. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՈՒՆՏ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԱԹԵՐԹ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳ . . . . .	30
5. ՎԵՐԱՏՈՒԳՈՂԱԿԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳ . . . . .	36

Հ Ս Խ Հ  
ԿՈՍՏՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ԺՂՈՎՐԴԿԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՍ

Հաստատված է ԺՏՀ-ի Վարչու-  
թյան կողմից  
1932 թ. մարտի 13-ին.

**ԿՈԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆԲՆԵՐ**

1. Քաղաքային բնակարանային հաշվառման նպատակն է սալ բնակարանային տնտեսությունը պլանավորող ու կարգավորող գերատեսչություններին ու կադմակեթրու-թյուններին ՀՍԽՀ քաղաքային վայրերի առկա բնակֆունդի տարածությունը, դրությունը և ոգտագործումը բնորոշող վիճակագրական նյութեր:

2. Բնակարանային հաշվառումը կատարում է ՀՍԽՀ կոմունայ Տնտեսության ժողկոմատը Պետպլանին կից ԺՏՀ-ի Վարչության հսկողությամբ ու աջակցությամբ:

3. Հաշվառումն սկսվում է ապրիլի սկզբներին և ավարտվում է մայիսին, համաձայն ամեն մի քաղաքի համար նշանակված ժամկետի:

4. Բնակարանային հաշվառում կատարվելու յե ՀՍԽՀ-ի բոլոր քաղաքային վայրերում (վորոնց ցուցակը վավերացվել է ժողկոմխորհի 1932 թ. մարտի 3-ի նիստում):

Ծանոթություն.— Այն քաղաքային վայրերը, վորոնք կուզեն ընդարձակել իրենց քաղաքային սահմանագիծը, պարտավոր են նախ քան հաշվառումը ստանալ հաշվառման շտաբի համաձայնությունը:

5. Հաշվառման յե՛նթակա յեն քաղաքային սահմանագծի ներսում գտնվող բոլոր կալվածքները, բացառությամբ քիմիական և արտադրական կոմիսարիատի, ՄՊԲՎ-ի այլև ուղղիչ տրեքների կողմից գրառեցրած տարածություն:

6. Հաշվառման ֆորմուլյաները հետևյալներն են:



3159-492

Մրբագրեցի՞՞ ԳԱՐ. ՀՈԿՈՐՑԱՆ, ՈՆ. ԳՈՍԵՐՉՅԱՆ

- № 1. Կալվածաթերթ.
2. Բնակարանային քարտ.
3. Կալվածացուցակ (Տուցակազրոյի վերստուգողական թերթ).
4. Կառուցվող շենքերի հարցաթերթ.
5. Քանդված շենքերի հարցաթերթ.
6. Հասարակական կուլտ կենցաղային հաստատութեան հարցաթերթ.
7. Հրահանգչի վերստուգողական թերթ.
8. Շրջանային ղեկավարի հաշվետու ղեկուցածեկ.
9. Կազմակերպչական հրահանգ.
10. Կալվածաթերթի լրացման հրահանգ.
11. Բնաքարտի լրացման հրահանգ.
12. Կառուցվող շենքի հարցաթերթի լրացման հրահանգ.
13. Քանդված շենքի հարցաթերթի լրացման հրահանգ.
14. Հասարակական կուլտ. կենցաղային հաստատութեան թերթերի հրահանգ.
15. Կալվածացուցակի և վերստուգողական թերթերի հրահանգ:
7. Հաշվառումը կատարվում է հատուկ ցուցակազրոյներով անհետև շրջելու (եքսպլիցիտն մեթոդ) միջոցով:

**II. ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԿՄՏԱՐՈՂ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

8. Հաշվառումը կատարում է Կոմունալ Տնտեսութեան Ժողկոմատը, վորին կից, հաշվառումը ղեկավարելու համար, կազմակերպված է բնակարանային հաշվառման հանրապետական խորհուրդ՝ Կոմունալ Տնտեսութեան Ժողկոմատի, Պետպլանի, Աշխտողկոմատի, Առժողկոմատի, ՀԱՄՍ-ի, Բնակչինկոպլի, Ժողատխորհի և Յերևանի Քաղխորհրդի պատասխանատու ներկայացուցիչների մասնակցութեամբ: Խորհրդին կից գործում է հաշվառման ոպերատիվ ղեկավարող շտաբը՝ Կոմունալ տնտեսութեան Ժողկոմի անմիջական նախադահութեամբ:

9. Առանձին քաղաքներում կազմված են աջակցող հանձնաժողովներ՝ կոմունալ բաժինների և պլանի մասերի անմիջական մասնակցութեամբ և Քաղխորհրդի (չրըզործկոմի) նախադահութեան անդամի նախադահութեամբ:

10. Տեղերում նշանակվում են հաշվառում վարող պա-

տասխանատու ղեկավարներ, վորոնց հաստատում է հանրապետական շտաբը:

11. Հանրապետական շտաբը ղեկավարում է բոլոր նախապատրաստական աշխատանքները, կատարում է հաշվառումը և կազմակերպում է մշակումը:

12. Քաղաքային հանձնաժողովների ղեկավարները պլանբաժնի և կոմունալ բաժնի ամենալայն մասնակցութեամբ պարտաւոր են նախքան հաշվառումն սկսելն—ավարտել հետևյալ նախապատրաստական աշխատանքները՝

ա) Պատրաստել (կոմունալ բաժնի միջոցով) քարտեզ քաղաքային սահմանազմերով, վորի մեջ պետք է մտնեն քաղաքի շտաբի ծայրամասերը, քաղաքի հետ հաշվող բոլոր արվարձանները և այլն: Պարտաւոր է բոլոր քաղաքային վայրերի համար, առանց բացառութեան:

բ) Ունենալ քաղաքի բնակված թաղամասերի համար հատակագիծ, վորի վրա նշանակված լինեն վոչ միայն բոլոր փողոցները այլև կալվածահամարները (կոմունալ բաժնի միջոցով): Այս աշխատանքը պարտաւոր է Յերևան, Լենինական, Դարաքիլիսա, Վաղարշապատ և Դիլիջան քաղաքների համար:

գ) Կազմել տնացուցակ (պլան. վիճմասերի միջոցով) հիմնվելով 1931 թ. սեպտեմբերի մշտական բնակչութեան հաշվառման ժամանակ կազմված ցուցակների վրա:

դ) Հանրապետական շտաբից ստացված որինտոիր որացուցային պլանի հիման վրա կազմել տեղական որացուցային պլանը և նախահաշիվը:

ե) Քաղաքը հրահանգչական (Յերևան և Լենինական) ու ցուցակազրակի շրջանների բաժանել:

զ) Հրավիրել հրահանգչական ու ցուցակազրակի անձնակազմը:

է) Կազմակերպել զբաւոր պրոպագանդ տեղական թերթերում և արհմիութեանների միջոցով՝ բերանացաի ղեկույցներ պրոֆիկոլեկտիվներում:

ը) Մինչև հաշվառումն սկսելը (միրբաժնի միջոցով) անվանակոչել բոլոր փողոցները, համարակալել կալվածները և կարգի բերել տնային մատյանները:

թ) Պարբերական ղեկույցներով իրազեկ պահել հանրապետական շտաբին աշխատանքների ընթացքի մասին:

ժ) Ամեն մի հրահանգչի և ցուցակազրոյի համար պատ-

բաստել տնացուցակ և հրահանգչի ու ցուցակադրողի շրջանի պլանը :

### III. ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿՍՏԱՐՈՒՄԸ

13. Հաշվառումը մեծ քաղաքներում տեւելու յե մինչև մեկ ամիս :

14. Հաշվառման համար ճշնաթամային որ չի նշանակվում, ցուցակադրողը վոր որը վոր լրացնում և ֆորմուլյարները, նույն սրվա տվյալներն ել մտցնում և ֆորմուլյարները մեջ :

15. Հաշվառումը մեծ քաղաքներում պետք և կաղմակերպել յերեկոյան ժամերին, վորպեսզի հնարավոր լինի վոչ միայն բնակիչներին տանը դտնել, այլև վորակիյալ հրահանգչիներ ու ցուցակադրողներ ունենալ :

16. Յուցակադրողներ պետք և հրավիրել վիճակագրական ստատ ունեցող վորակիյալ ուժերից ու շինուսանողներից :

17. Յուցակադրողների աշխատանքը միավորելու, նրանց անմիջականորեն ղեկավարելու, ցուցակադրողներին հրահանգելու և քաղաքի ղեկավարին, ցուցակադրողներին հրահանգելու գործում ոժանդակելու համար հրահանգչիներ են հրավիրվում, վորոնցից յուրաքանչյուրին հանձնարարվում և վորոչ քանակությամբ (սակայն 7-ից վոչ ավել) ցուցակադրողներ :

18. Իբրև հրահանգչիներ հրավիրվում են ավելի քարձր վորակ ու վիճակագրական ստատ ունեցող անձնավորություններ, մասնավորապես առաջներում նման հաշվառումների ժամանակ ղեկավար և հրահանգչական պաշտոններ վարած անձնավորություններից :

19. Յուցակադրողը պարտավոր և ճիշտ և անթերի կերպով իմանալ հաշվառման ծրագիրը, ձևերն ու հրահանգը և, այդ ավելի լավ յուրացնելու համար, մինչև հաշվառման սկիզբը հրահանգչի ղեկավարությամբ ձևերը լրացնելու փորձ ձեռք բերի :

20. Մինչև հաշվառումն սկսելը ցուցակադրողը պարտավոր և ուսումնասիրել յուր ցուցակադրական շրջանն ինչպես պլանշետի վրա, նույնպես և տեղում : Բացի այդ, նա հրահանգչի ու մյուս հարևան ցուցակադրողների հետ միասին պետք և ճիշտ կերպով վորոչի յուր շրջանի սահմանները :

21. Յուրաքանչյուր շինթաղամասի և շինթաղամասի ներսում կարվածքների հաշվառման հերթականությունը հրահանգչից ցույց և սալիս ցուցակադրողի թե պլանշետի վրա և թե տեղում :

22. Հաշվառման ու անձնակաղմի վարձատրությունը վորոչվում և հանրապետական շտաբի կողմից այդ նպատակի համար հաստատված նախահաշվի սահմաններում և հայտարնվում և հրավիրված կաղմին անպայմանորեն հաշվառումը սկսելուց առաջ :

23. Կաղմի վարձատրությունը կատարվում և աշխատանքները ավարտելուց և հաշվառման բոլոր նյութերը հանձնելուց հետո :

24. Հաշվառու ամբողջ անձնակաղմը պետք և ունենա համապատասխան վիպական, վորը պետք և ներկայացվի պահանջվելուն պես :

25. Հաշվառման ձևերը ցուցակադրողը լրացնում և անմիջական հարցման միջոցով : Կարվածքին ու շենքերին վերաբերող հարցերը տրվում են տնային վարչությանը, պարետին, կամ անատիրոջը, իսկ մնացած բոլոր խնդիրները, վոր վերաբերում են կացարաններին ու բնակիչներին՝ այդ կացարանները վարձողներին, կամ նրանց մեջ ապրողներին : Կացարանների շրջումը կատարվում և տնային վարչության (տնատիրոջ, ամս լիպորի և այլն) ներկայացուցչի հետ, վորը և ցուցակադրողի հետ ստորագրում և լրացրած ձևերը (կարվածաթերթին ու բնակարանի քարտը) :

26. Յեթե ցուցակադրողը կասկածում և իրեն արված տեղեկությունների ճշտության մեջ, նա պարտավոր և բոլոր հնարավոր միջոցներին դիմել՝ ճիշտ տեղեկություններ ստանալու, այն է՝ մեկը մյուսին ստուգող ու լրացուցիչ հարցեր տալ հարցաքննիչին, հարևաններին հարց ու փորձանել, տնային վարչությունից տեղեկություններ ստանալ և այլն :

27. Յեթե հարցման յենթարկվողը յուր ասածների ճշտությունը հաստատող փաստաթղթեր և ներկայացնում, ցուցակադրողը կարող և ուզողորձել այդ, իսկ հարցաքննվողից չպետք և պահանջել փաստաթղթեր ներկայացնելու :

28. Հարևաններին հարցաքննելու, կամ տնային վարչություններից տեղեկանքներ վերցնելու միջոցին ցուցակադրողը կարող և դիմել նաև հարցումը միանգամայն անհնարին

լինելու դեպքում, որ. տանտիրոջ, կամ վարձակալի քաղաքից բացակայելու դեպքում: Սակայն յեթե ցուցակագրողը տանը չի գտել հարցման յենթակային, նա պարտավոր է յերկրորդ անգամ գալ, նախորոք հարեաններն միջոցով իմաց տալով նրան յուր գալու ժամանակի մասին:

29. Յեթե ցուցակագրողին կատեղորիկ կերպով մերժում են տեղեկություններ տալ, կամ կացարանը թողնել, ցուցակագրողը դիմում է տնային վարչության ոժանդակությանը. յեթե այս միջոցը ևս չի ոգնում, նա այդ մասին պարտավոր է տեղեկացնելու յուր հրահանգչին:

30. Յուրաքանչյուր ցուցակագրող պարտավոր է հիշել, վոր հաշվառման հաջողությունը կախած է թե հարցաթերթիկները մտածված լրացնելուց և թե ղեպի բնակիչները քաղաքավարի ու կորրեկտ փերաբերվելուց:

Ցուցակագրողը անմիջապես հաշվառմանը չվերաբերող հարցեր չպետք է տա:

31. Հարցաթերթիկների մեջ բոլոր դրանցումները կատարվում են թանաքով կամ քիմիական մատիտով, առանց ջնջումների ու սրբոց:

32. Յուրաքանչյուր կալվածքի համար հաշվառումն սկսվում է ցուցակագրողի կողմից կալվածաթերթ կազմելով (ձև № 1): Կալվածաթերթի մեջ բոլոր տեղեկությունները գրանցվում են տնային վարչություններից ստացած տեղեկություններն հիման վրա, ըստ վորում կացարանների ցուցակում (հարց 15) տնային վարչության հարցման ժամանակ լրացվում է, միմիայն 1, 2, 3, և 5 սյունակները, իսկ կացարանները գրանցվում են այսպես. նախ՝ թվում են մեկ չենքի բոլոր կացարանները ըստ հարկերի, իսկ հետո անց նում են հետևյալ շենքին: Կալվածաթերթը կազմելուց հետո, ցուցակագրողն սկսում է շրջել բոլոր կացարանները՝ բնակելի և վոչ բնակելի և լրացնում կալվածաթերթի 15-րդ հարցի աղյուսակի մասցած բոլոր սյունակները. դրա հետ միաժամանակ բնակելի կացարանների համար կազմում է բնակարանային քարտ (ձև № 2):

33. Այն դեպքերում, յերբ կացարանները շրջելու ժամանակ կարիք յեղավ սվյալ տնային վարչության կացարանների ցուցակի մեջ լրացում, ուղղում կամ ճշտում կատարելու (հայտարարվել է բաց թողնված կացարան, յերկու կացարան մեկի տեղ է դրված, կամ ընդհակառակը և այլն)

ցուցակագրողը պարտավոր է այդ ուղղումները մտցնել թե կալվածաթերթի և թե բնակքարտի ու կալվածացուցակի մեջ:

34. Յուրաքանչյուր կալվածք հաշվառման յենթարկելուց հետո, ցուցակագրողը այդ կալվածքը դրանցում է յուր վերստուգիչ թերթի մեջ (ձև № 3) և նշան է անում յուր մոտ յեղած տնացուցակի մեջ: Յեթե այդ կալվածքը ցուցակում չի հայտարարվում, ցուցակագրողը լրացուցիչ կերպով մտցնում է. ընդհակառակն՝ յեթե ցուցակի մեջ յեղած կալվածքը, իրոք, փաստորեն չի հայտարարված, այդ մասին տնացուցակի մեջ համապատասխան նշում է կատարվում:

35. Հրահանգիչը պարտավոր է.

#### ա. Հաշվառման սկզբում

ա) Ոգնել հաշվառման ղեկավարին՝ ցուցակագրողներին հրահանգելու գործում:

բ) Պլանշտի վրա և տեղում ուսումնասիրել յուր շրջանը և, մասնավորապես, նրա սահմանները:

գ) Ցուցակագրողներին դասավորել ըստ ցուցակագրական շրջանների և նրանց յուրաքանչյուրի համար սահմանել կալվածքների հաշվառման հերթականությունը:

դ) Հաշվառումը ղեկավարելիս ստանալ հարցաթերթեր և դրենական պիտույքներ և ժամանակին մատակարարել դրանցով ցուցակագրողներին:

բ. Հաշվառումը կատարելու պրոցեսում—անմիջական ղեկավարություն և մշտական հսկողություն ցուցակագրողների աշխատանքների վրա, վորի համար հրահանգիչը՝

ա) Կատարում է ցուցակագրողների ամենօրյա հաշվառում:

բ) Ծրջում է ցուցակագրողների աշխատանքի ժամանակ նրանց հրահանգելու և նրանց աշխատանքի ընթացքում ծագած դժվարությունները լուծելու համար:

գ) Ներկայացնում է ղեկավարին աշխատանքի ընթացքի մասին ամենօրյա ամփոփ զեկուցումներ:

IV. ՆՅՈՒԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄՆ ՈՒ ՀԱՆՁՆՈՒՄԸ.

36. Յուրյակազրական շրջանի հաշվառումը ավարտելուց հետո, ցուցակազրույրը հատուկ ստացականով հրահանգչին և հանձնում՝ այդ շրջանի վերատուգոգական թերթը (ձև № 3), կալվածաթերթը, բնակարանային քարտերը (կալվածաթերթում կատարած գրանցումների կարգով դասավորված) և մնացած բոլոր հարցաթերթերն ու հրահանգչները:

37. Յուրյակազրույրը ստացած նյութը հրահանգչիչը ստուգման և յենթարկում, ինչպես հաշվառումը լրիվ կատարելու, նույնպես և ձևերը ձիշտ լրացնելու և ցուցակազրույրի կողմից կատարված գումարումների ճշտության տեսակետից:

38. Թերություններ հայտարարելու դեպքում, յերբ գրանց ուղղելու համար անհրաժեշտ և հաճախել ցուցակազրման յենթարկված տները, նյութերը վերադարձվում են ցուցակազրույրին, իսկ յեթե այդ անհրաժեշտ և, ինքը՝ հրահանգչին և դնում և տեղն ու տեղն ստուգում:

39. Ստուգված նյութը մացվում և հրահանգչի վերատուգման թերթում (ձև № 7), վոր կազմվելու յե յերկու որինակով:

40. Յուրյակազրույրներից ցուցակազրական շրջանի բոլոր նյութերը ստանալուց ու ստուգելուց, հրահանգչիչը վերատուգողական թերթում գումարում և կատարում և ամբողջ նյութը (կալվածաթերթեր, բնակարանային քարտեր և ցուցակազրույրի վերացումուման թերթերը), պլանշետի և յուր ստուգման մեկ որինակի հետ հանձնում և դեկավարին վերատուգման թերթի յերկրորդ որինակը՝ նյութն ստանալու մասին՝ դեկավարի ստորագրությամբ, մնում և հրահանգչի մոտ մինչև հաշվառման աշխատանքների լիակատար ավարտումը:

41. Նյութերի հանձնումը թե ցուցակազրույրների և թե հրահանգչիչների կողմից կատարվում և հաշվառման ամբողջ ժամանակաշրջանում:

Նյութի հանձնումը վերջացնելու համար տրվում է՝ ցուցակարգույին 2 որ և հրահանգչին՝ 5 որ, հաշվառումը ավարտելուց հետո:

Ձեյ № 10

Z U H Z

ԿՈՍՏԱՆԴՆԱԿԱՆ ՏԵՏԵՍՈՒԹՅԱՆ  
ԺՂՈՎԱՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՍ

Հաստատված է ԺՏ.-ի Վարչու-  
թյան կողմից  
1932 թ. մարտի 15-ին.

Հ Ր Ա Հ Ա Ն Գ  
ԿԱԼՎԱԾԱԹԵՐԹ ԼՐԱՑՆԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ.

1. Կալվածաթերթ (ձև № 1) լրացվում է յուրաքանչյուր կառուցված կալվածքի համար:

2. Վոչ կառուցված կալվածքի համար կալվածաթերթ չի կազմվում:

3. Կառուցված և համարվում կալվածքը, յերբ ունի վորևե սպասարկման համար համապատասխան կառուցում (բնակարան, խանութ, պահեստ, դործարան, հիմնարկ և այլն):

4. Կալվածքը կառուցված չի համարվում և կալվածաթերթ չի լրացվում, յեթե ունի միայն դետնափորներ ու հորիկներ (գեմլյանիկա, շալաշ) թեկուզ բնակված: Վորպես կառուցված կալվածք չպետք և հաշվել այգիների, բանջարանոցների, փայտի բաց պահեստներին կից պահակատները, այգիներում յեղած հնձաններն (առանց բնակարանի) ու կալվածքի վրա գտնված ժամանակավոր շինությունները, կառուցող բանվորների համար ժամանակավոր բարակները և այլն:

Ծանոթ.— Կետ 4-ում հիշատակված վոչ կառուցված կալվածների բնակչության գրելու մասին տես բնակարանային քարտի լրացման հրահանգի կետ 6-ը:

5. Վորպես առանձին կալվածք պետք և համարել բեհտորային պլան ունեցող քաղաքներում իբրև ընդհանուր որևեք,

րեեսարային հատուկ № ունեցող յուրաքանչյուր հողամասը, յերբ պատկանում է մի տիրոջ:

6. Վորպես առանձին կալվածք պետք է համարել ընդհանուր պլանի ստանդարտային պլան չունեցող քաղաքներում առանձին տնատեղ հողամաս, վորն ունի ընդհանուր բակ և այդ հողամասի վրա գտնվող բոլոր շինությունները մեկ տիրոջ են պատկանում և կամ վարձակալված են (արենդ) մեկ վարձակալի կողմից:

7. Միևնույն հողամասի վրա յեղող շինությունների համար լրացվում է յերկու կամ ավելի կալվածաթերթ, յեթե ավյալ կալվածքում գտնվող շինությունները պատկանում են մեկից ավելի տերերի կամ վարձակալների (արենդատոր): Այդպիսի դեպքերում կալվածաթերթում տան համարի կողքին ավելացվում են տառեր ա. բ. գ. և այլն:

8. Տնատեղ հողամաս չունեցող առանձնակի կանդնած շինությունները ցուցակագրության ժամանակ հաշվի յեն առնվում իբրև առանձին կալվածքներ, իսկ այդպիսի կալվածքների տարածությունը համարվում է շինության զբաղեցրած տարածությունը:

9. Մեկ հողամասի վրա տեղավորված կրպակ (լարյակ) տիպի մանր շինությունների խումբը համարվում է մեկ կալվածք և ամբողջ խմբի համար կազմվում է մեկ կալվածաթերթ:

10. Ամբողջովին զորանոցներով, կալանատներով զբաղված կալվածքների համար կալվածաթերթ չի կազմվում, այլ միայն մտցվում է կալվածացուցակում (ձև № 3):

11. Կիսավարտ կամ քանդված շինություններ ունեցող կալվածքը պետք է համարել կառուցումներ ունեցող և լրացնել կալվածաթերթ:

12. Հրահանգական շրջան, ցուցակագրողի շրջան, շինարարական թաղ № . . . : Լրացվում են համաձայն հաշվառման քաղաքային ղեկավարի ու հրահանգչի ցուցմունքների:

13. Կալվածաթերթի № —ի դիժանց գրվում է այն հերթահամարը, վորով ավյալ կալվածքը ցուցակագրված է կալվածացուցակում (ձև № 3):

## II. ԱՌԱՆՁԻՆ ՀԱՐՅԵՐԻՆ ՊՍՏԱՍԽԱՆՆԵՆՆԵՆԻ ՉՐԱՀԱՆԳ.

Առաջին հարց. Շրջանի, փողոցի, նրբանցքի հրապարակի, փակուղու անունը գրվում է լրիվ, առանց կրճատումների:

Յերկրորդ հարց.—Կալվածքի տեր գրել այն անձին, վորին ցույց են տալիս տան բնակիչները և այդ առթիվ փաստաթղթեր ճշտելու պետք չկա: Կալվածքի տեր համարվում է նա, ով ոտարացնելու իրավունք ունի:

Յեթե կալվածքի տեր են հանդիսանում միաժամանակ մի քանիսը, այդ դեպքում նրանք համարվում են համատեր և 2-րդ հարցում նշվում է համատեր հանդիսացող բոլոր հիմնարկների (կազմակերպությունների) անունը: Մասնատիրական կալվածքների նկատմամբ 2-րդ հարցում նշվում է «մասնավոր», իսկ 3-րդ հարցի աղյուսակում տրվում է համատերերի անվանացուցակը, լրացնելով աղյուսակի բոլոր սյունակները, յուրաքանչյուր համատիրոջ համար:

Յերրորդ հարց.—Այդ հարցին պատասխանելիս, այսինքն՝ տիրոջ կամ համատիրոջ սոցիալական դրուժյունը վորոշելիս (3, 4, 5 և 6 սյունակներ) պետք է ղեկավարվել «բնակարանային քարտը լրացնելու հրահանգ»-ի մաս 2-րդի ցուցմունքներով, վորոնք վերաբերում են կացարանի բնակիչների սոցիալական դրուժյունը վորոշելուն (բնակարանային քարտի առաջին հարցի 3, 4, 5 և 6-րդ սյունակները):

Չարրորդ հարց.—Յեթե կալվածքը վարձակալված է (արենդով վերցրած) մասնավոր անձնավորության կողմից, — գրվում է վարձակալի անունը, ազգանունը, իսկ յեթե վարձակալը հիմնարկ է, ձեռնարկ կամ հասարակական կազմակերպություն, — մանրամասն գրվում է հիմնարկի, ձեռնարկի կամ կազմակերպության անունը: Որինակ՝ յեթե տունը վարձակալված է բնակվարձկոտպի կողմից—այդ դեպքում 2-րդ կետում գրվում է, վոր տունը պատկանում է Յերբաղխորհրդին, իսկ 4-րդ կետում նշվում է, վոր վարձակալված է № . . . բնակվարձկոտպի կողմից:

Հինգերորդ հարց.—ա) Յեթե տնատեղի հողամասում կազմվում է մի քանի կալվածաթերթ (տես վերը § 7), այդ դեպքում հողամասի այն մասը, վոր ընդհանուր ոգտադրման մասն տակ է գտնվում, պայմանորեն հավասար կերպով բաժանվում է բոլոր ոգտավորների վրա:

բ. Կալվածքի տարածությունը վորոշվում է փաստաթղթերի հիման վրա, կամ տիրոջ, վարձակալի, կառավարչի, պարետի և այլն հարցման, կամ անմիջականորեն չափելու միջոցով:

գ. Կանաչ տարածություն պետք է հասկանալ այն տա-

րածութիւնը, վոր բռնված է ծառերով և թփերով: Բա-  
կերում առհասարակ այդ տարածութիւնը դատորոշված է  
լինում մնացած տարածութիւնից, յետե միայն մի քանի ծա-  
ռեր են, ապա չպետք է ցույց տալ նրանց բռնած տարածու-  
թիւնը, այլ թե քանի հատ լինելը:

Կառուցման, կանանչ տարածութեան, բանջարանոցի և  
բաց պահեստի տարածութիւնների դումարը կարող է հալա-  
սար չլինել. այս հարցի «ա» մասում ցույց տրված կալվածքի  
ընդհանուր տարածութեան, վորովհետև մնացած տարածու-  
թիւնը բռնում է բակը:

Վեցերորդ, յոթերորդ և իններորդ հարցեր: ա) Կալ-  
վածքը ամբողջութեամբ համարվում է ելեկտրոցանցին, ջրը-  
մուղին, կոյուղուն միացված, յետե կալվածքում կա թե-  
կուզ մեկ միացված կետ: Որինակ՝ յետե կալվածքում կա  
յերկու կորպուս մի քանի բնակելի բնակարաններով յուրա-  
քանչյուրում, իսկ ելեկտրական լուսավորութիւն (ջրմուղ  
կամ կոյուղի) անց է կացված միմիայն մեկ բնակարա-  
նում, — այդ դեպքում ամբողջ այդ կալվածքը պետք է հա-  
մարել միացված ելցանցին, ջրմուղին, կոյուղուն):

բ) Չպետք է համարել ել. ցանցին միացված այն կալ-  
վածքները, վորոնք ելեկտրական լուսավորութեամբ ոգտվում  
են դրսի (փողոցի) լուսավորութեան համար:

գ) Ելեկտրալուսավորութեան, ջրմուղի, կոյուղու գոր-  
ծողութեան մեջ սեղի ունեցող ժամանակավոր ընդհատումնե-  
րը (ժամանակին վարձը չվճարելու, կամ այդ ձեռնարկու-  
թիւնների վոչ կարգին լինելու հետևանքով), — հաշի չեն  
առնվում, և այդ կալվածքները համարվում են միացված ել-  
ցանցին (ջրմուղին կամ կոյուղուն):

դ) ՀՄՍՀ-ի քաղաքներում առհասարակ կոյուղի չկա:  
Յերևանում կա միայն Ռաֆֆի փողոցի ուղղութեամբ:  
Չպիտեի և ամեն մի տան ունեցած աղբանոցը կոյուղի չհաշ-  
վել:

ե) ՀՄՍՀ-ի քաղաքներում առհասարակ կա չորս տե-  
սակ աղբահանում:

ա) կլանող հորեր, յերբ պատերը ծծում են ջրալի մասերը,  
բ) ցեմենտով, կրով ծեփված պատերով, աղբահորեր  
(սիտակ Ծամրո):

գ) յերբ փոս է փորված, առանց վորելի ծածկի, այդպի-  
սինների համար գրել աղբափոս:

դ) յերբ չկա վոչ մի հարմարութիւն (գլխավորաբար  
լենինական) ուղղակի դետնի վրա և որեցոր հանձնվում է  
աղբասայրին) այդպիսինի դիմաց գրել «հարմարութիւն  
չունի»:

Ուրեխորդ հարց. — Հատուկ հարմարութիւն համար-  
վում է աղբարկղ իսկ «ինչպիսի» հարցին պատասխանել վիակ,  
բաց:

Տասերորդ հարց. — ա) Այստեղ հաշի պետք է առնել  
կուլտ-կենցաղային հաստատութիւններից նրանց, վորոնք  
սպասարկում են, կամ նպատակ ունեն սպասարկել տվյալ  
կալվածքի, կամ կալվածքներին մի խմբի բնակիչներին, որ-  
տներ — կոմունաներին, բնակվարձկոպաներին: Այստեղ մի-  
կնույն է թե ո՛ւմ տեսչութեան տակ են գտնվում այդ հաստա-  
տութիւնները՝ տնային հասարակութեան, սպառկոպերա-  
ցիայի, պետամբմիներին կամ պրոֆեսիոնալ ու այլ հասա-  
րակական կազմակերպութեան:

բ) Հասարակական ոգտադործութեան հաստատութիւն-  
ները, վորոնցից ոգտվում են նաև տվյալ բնակվարձկոպի հա-  
մար միանդամայն կողմնակի անձնավորութիւններ,  
գրանցվում են միմիայն այն դեպքում, յետե նրանք կազմա-  
կերպված են տնային հասարակայնութեան կողմից և գտնու-  
վում են նրա տեսչութեան տակ:

գ) Յուցակազման յենթակա յեն հասարակական լվաց-  
քատները, խոհանոցները, ինքնագործ հաշարանները, տնա-  
յին խանութներն ու բաշխիչները, տնային կամ բնակվարձ-  
կոպաների մանկապարտեղները, հրապարակները, մուրները  
և մանկական այլ հաստատութիւնները, տնային և բնակ-  
վարձկոպային ակումբները, կինոսարքավորումները, գրա-  
դարան — ընթերցարանները, կարճիք անկյունները, ոսղիո-  
սարքավորումները, սպորտի սրահները, սպորտի հրապա-  
րակները, հրաձգարանները, հասարակական դուշերը, լողա-  
րանները, ալպանները և այլն:

Ըստ այնմ նշվում են գրանցից դործողները, կամ տարվա  
ընթացքում գործողները, թեկուզ հաշվառման ժամանակա-  
միջոցում սեղոնի, վերանորոգման կամ այլ պատճառներով  
չեն աշխատում:

դ) Չպետք է խառնել ընդհանուր և հասարակական խո-  
հանոցները, լվացքատները:

ե) Բնդհանուր խոհանոց, բնդհանուր լվացքատուն հա-

մարվում են այն տեղերը, վորտեղ ոգավորողներից յուրաքանչյուրը հնարավորութիւն ունի համապատասխան աշխատանք կատարել— իլեւն համար ճաշ պատրաստել, լվանալ յուր սպիտակեղենները:

դ) Այդ անհատական ոգտագործման հախուակ հասարակական խոհանոցը, հասարակական լվացքատունը յենթադրում է աշխատանքի այնպիսի կազմակերպում, վորի հետեանքով մասնակցողներից յուրաքանչյուրը ստանում է այդ խոհանոցից լված քատնից պատրաստի պարեն, պատրաստի ճաշ լվացած սպիտակեղեն: Այստեղ միևնույն է տվյալ դեպքում մասնակցեցներ կոնկրետ աշխատանքն ոգտագործվում է, թէ տվյալ կազմակերպութիւնը ոգտագործում է վարձու բանավորական ուժ:

Տասնութերորդ հարց.— Մնասունների թվի մեջ հաշվել վոչ միայն մեծերին, այլև ձաղերին, հորթերին, դառներին, խոճկորներին:

Տասնութերորդ հարց.— ա) Բոլորովին ֆանդված համարվում է այնպիսի շինութիւնը, վորը յուր դրութեամբ չի կարող ոգտագործվել և փաստորեն չի ոգտագործվում իբրև շինութիւն (բնակութեան կամ այլ նպատակների համար):

բ) Մասնակի ֆանդվածների շարքն են դասված այնպիսի շինութիւններ, վորոնք քանդված լինելու ցայտուն արտահայտված արտաքին նշաններ ունեն, կամ քանդման վտանգի տակ են, վորի հետեանքով չենք մի մասը յուր անմիջական նպատակներով— և լրիվ կերպով չի ոգտագործվում (պատը, անկյունը քանդված, կտուրը, միջհարկային ծածկը փլիված, գերանները տեղահան յեղած, պատերը հենված են հենարանների վրա և այլն):

գ) Կառուցվող համարվում են այն շինութիւնները, վորոնց մեջ կառուցման աշխատանքների շարունակվելու պատճառով դեռ բնակեցում չի կատարված: Մեկ կամ մի քանի կացարանների ժամանակավոր դբարեցնելը հիմք չի ծառայելու ամբողջ շինութիւնը համարել կառուցված:

Տասնութերորդ հարց.— ա) Առանձին շինութիւն է համարվում ամեն մի կառուցվածք, վոր գտնվում է մի տանիքի տակ, ըստ վորում միջապատերը, ճարտարապետական զարդարանքները, կիսահարկերը և հարակից շինվածքները տանիքի անբնդհատութեան խախտող չեն համարվում:

բ) Շինութիւնների շարքը չպետք է դասել առանձնացած

շինութիւններն ու կառուցվածքները, վորոնց նպատակն է սպասարկել տվյալ կառուցվածքի հիմնական շինութեան բնակիչներին: Այդ պատճառով իբրև առանձին շինութիւններ, հաշվի չեն առնվում՝ առանձնացած խոհանոցը, արտաքնոցը, լվացքատունը, փայտանոցը, նկուղը, ջրհորի և այլ ծածքները և այլն:

գ) Ընդհակառակն՝ առանձին շինութիւն պետք է հաշվել այն առանձնացած շինութիւններն ու կառուցվածքները, վորոնք վոչ սպասարկելու նպատակով են շինված, որինակ՝ խանութ, արհեստանոց, դարձ, ակտո, առևտրական պահեստ և այլն:

դ) 13-րդ հարցի աղյուսակի մեջ առանձին տողով գրանցվում է կառուցվածքի մեջ գտնվող յուրաքանչյուր շինութիւնը, բացի՝ 1. սպասարկու շինքերից, 2. բոլորովին քանդված շինքերից և 3. կառուցվող շինքերից: Ընդհակառակ կիսաքանդ շինութիւնները պետք է գրել 13-րդ հարցի աղյուսակում առանձին տողով:

13-րդ հարցի աղյուսակի լրացումը.


2-րդ սյունակ.— ձիշտ կերպով մասնանշել շինութեան բնույթը ըստ նրա նշանակման (ինչ նպատակի համար է շինված), որ. «բնակելի տուն», «հիմնարկ», «գործարանային կորպուս», «հյուրանոց», «խանութներ», «բաղնիք», «գեղարոց», «թատրոն» և այլն: Ենթը խառն նշանակութեան ունենալու դեպքում, — առաջին տեղը պետք է դնել այն, վորը հիմնականն է տվյալ շինքի համար, որինակ «բնակելի տուն խանութներով», «հիմնարկ և բնակարաններ», «բնակարաններ և հիմնարկ», «գեղարոց և բնակարաններ», «բնակարաններ և արհեստանոց» և այլն:

3-րդ սյունակ.— ձիշտ կերպով ցույց է տրվում թէ ինչ նյութից է շարված դրսի պատերը (բետոն, աղյուս, բնական քար, փայտ, հում աղյուս, կավ):

Ենթե պատի շինութեանը յերկու նյութից է բաղկացած, պետք է այդ ցույց տալ, որինակ՝ ներքեվը քար, վերևը՝ փայտ:

4-րդ սյունակ.— Պատերը շինվածանյութերի նման մասնատման կերպով ցույց է տրվում տանիքի շինանյութը (յերկաթ, կղմիւղը, խեմ (տաշիղ) և այլն):

5-րդ սյունակ.— ա) շարվելով վորոշելիս նկուղը, կիսանկուղը, ձեղնահարկը, շարվածքի մեղմնին նկատի չեն առնվում: Երկուստեք շինվածքները կիսանկուղային և



ձեղնահարկային հարկեր լինելու դեպքում հարկերի թվին ա-  
վելացնել «ն», «կ» կամ «ձ» տառերը որինակ 1-ն (մեկ հարկ  
նկուղով), 2-ձ (2 հարկ ձեղնահարկով) և այլն:

բ) Նկուղ համարվում է շինության այն մասը, վորի թե  
հատակը և թե առաստաղը փողոցի մակարդակից ցածր են,  
իսկ կիսանկուղ՝ յերբ միայն հատակն է դեռնից ցածր:

գ) Յեթե շինության տարրեր մասերում տարրեր թվով  
հարկեր կան, նշանակվում է հարկերի ամենամեծ թիվը:

5-րդ սյունակ.— Շինության կառուցումն ավարտելու  
ժամանակ համարվում է այն մոմենտը, յերբ շինությունը  
հասցված է ուղապարծելու, կամ բնակեցնելու համար պի-  
տանի գրության, թեկուղ և այդ մոմենտին ավարտված չեն  
բոլոր շինարարական աշխատանքները, ինչպես որինակ՝ ներ-  
կելը, դրսից սվաղելը, ներքին սարքավորում, ջրմուղ և այլն  
աշխատանքները:

7-րդ սյունակ.— Յեթե վերնաշենք է, գրել «վեր», իսկ  
յեթե կից շինություն է, գրել «կից»: Յեթե վորեւ շինություն  
ունի թե վերնաշենք և թե կից շինություն, այդ դեպքում  
պետք է 7—13 սյունակների պատասխանները գրել 2 տողով,  
առաջին տողում վերնաշենքի մասին հարցերին պատասխա-  
նել, իսկ 2-րդ տողում՝ կից շինություն:

7-րդ սյունակի լրացումը տես 2-րդ սյունակի լրացման  
հրահանգը:

9-րդ սյունակի լրացումը տես 3-րդ սյունակի լրացման  
հրահանգը:

10-րդ սյունակի լրացումը տես 5-րդ սյունակի լրաց-  
ման հրահանգը:

8-րդ սյունակ.— Կարող է պատահել, վոր վերնաշենքի  
կամ կից շինության տերը լինի ուրիշը (վոչ կալվածքի տե-  
րը): Այս պատճառով այստեղ պետք է ցույց տալ այն հիմ-  
նարկի անունը, կամ մասնավորի աղանունը, վորն այդ նոր  
շինության տերն է հանդիսանում:

11-րդ սյունակ.— Ցույց տալ սենյակների (բնակելի և  
վոչ բնակելի) ընդհանուր տարածությունը քառ. մետրերով:  
Այդ տարածության մեջ չպետք է մտցնել միջանցքների, հաշ-  
տերի, մուտանների, արտաքնոցների և այլ սպասարկու կա-  
ցարանների տարածությունը:

13-րդ սյունակ.— Այս հարցը վերաբերում է միայն նոր  
շինված վերնաշենքի կամ կից շինության բնակչության:

Տասչորսերորդ հարց.— Յեթե շենքը Պետապի կողմից  
չի դնահատված, այդ դեպքում գրել «չի դնահատված»:

Տասնինգերորդ հարց.— ա) Այս հարցի ցուցակում  
պետք է զբանցել հաշվառման ժամանակ բնակչության համար  
դրադեցրած բոլոր կացարանները, անկախ նրանց սկզբնական  
նշանակումից և 2) բնակելի տիպի շինություններում տեղա-  
վորված բոլոր կացարանները, թեկուղ դրաված լինեն վոչ  
բնակչության համար:

բ) Բնակելի տիպի շենք պետք է համարել բոլոր շինու-  
թյունները, բացառությամբ նրանց, վորոնք բացահայտորեն  
նշանակված են վոչ բնակչության համար, որինակ՝ գործարա-  
նային կորպուս, կայարան, առևտրական պահեստ, զվարճա-  
տեղ, հիվանդանոց, դպրոց, ախումբ, հիմնարկ և այլն: Յեթե  
թվարկված այդ վոչ բնակչության համար հատկացված շի-  
նություններում կան բնակչության համար դրադեցրած առան-  
ձին սենյակներ կամ բնակարաններ (կառավարչի, պահակի  
բնակարան և այլն), այդ դեպքում 15-րդ հրցի ցուցակում  
գրանցվում են միմիայն բնակչության համար հատկացված  
այդ բնակարանները:

գ) Ցուցակում առանձին տողով վորպես կացարան  
գրանցվում են մեկ կամ մեկից ավելի սենյակներից բաղկա-  
ցած միավորումը, վորը մի վարձողի կողմից վարձված է  
ուղղակի տանտիրոջից: Նույն հիմունքներով ցույց են տրը-  
վում ձրի դրադեցրած կամ տանտիրոջ կողմից դրադեցրած  
կացարանները:

դ) Այս ցուցակում կացարանները պետք է սկսել գրել շի-  
նություն առ շինություն, սկսելով № 13 հարցում աղյուս-  
սակում գրված № 1 շինությունից, ապա անցնել 2-րդին,  
3-րդին և այլն:

### Տասնինգերորդ հարցի առանձին սյունակների լրացումը

1-ին սյունակ.— Այստեղ պետք է գրել № 13 հարցի  
աղյուսակում գրված շինության հերթական համարը, վորի  
կացարանի մասին լրացվելու յե ամբողջ տողը:

2-րդ սյունակ.— Հերթահամարն սկսում է մեկից և շա-  
րունակվում է մինչև վերջ, անկախ նրանից թե վոր № շինու-  
թյունում է գտնվում:

3-րդ սյունակ.— Այն կացարանների նկատմամբ, վորոնք

ամբողջովին գրադեցված են բնակութեան համար, նշվում է «բնակ.» իսկ յեթե կացարանը վոչ բնակութեան համար է ողտադործվում, — մատնանշվում է ինչ նպատակների համար, որինակ՝ «հիմնարկ», «գւլրոց», «արհեստանոց», «խանութ», «ամբուլատորիա», և այլն: Այն դեպքում, յերբ սր. մանկապարտեզի մի մասը ողտադործվում է բնակութեան համար, գրվում է «հիմնարկ բնակելի»:

4-րդ սյունակ. — Նշվում է կացարանի սկզբնական, այսինքն՝ ուղղակի նշանակումը, այդ սյունակը լրացվում է տվյալ ժամանակամիջոցում բնակութեան և վոչ բնակելի նպատակներով ողտադործվող բոլոր կացարանների համար:

5-րդ սյունակ. — Թե վոր հարկում է գտնվում կացարանը հարցին պատասխանելիս, նկուղային ու կիսանկուղային հարկերը հաշվի չեն առնվում: Յեթե կացարանը տեղավորված է յերկու և ավել հարկերում, — այն դեպքում ցույց են տրվում այդ կացարանի կողմից գրադեցրած բոլոր հարկերը, որինակ՝ «2-րդ և 3-րդ», կամ «1-ին և 3-րդ»:

6-րդ սյունակ. — Կտեղիտ կերպով ցույց է տրվում թե ի՞նչ նյութից է շինված հատակը — «փայտ», «ասֆալտ», «ցեմենտ», «քար», «աղյուս», «հող», «կավ» և այլն:

7-րդ սյունակ. — Առանձին սենյակ համարվում է ամեն մի տեղարան, վորը կտրված է հարեան տեղարանից վոչ շարժական, մինչև առաստաղ բարձրացող պատով, անկախ նրանից, թե ի՞նչ նյութից է շինված պատը: Միջանցիկ սենյակները համարվում են առանձին սենյակներ և հաշվի չեն առնվում սենյակների թվում:

Նույն հիմունքներով սենյակ (տեղարան) են հաշվվում և խանութները: Սենյակների հաշվից դուրս են հանվում միջանցները, հատերը, լողաբանները, մառանները, այլև պատշգամբներն ու սրահները:

8-րդ սյունակ. — Վաքձողի կողմից գրադեցրած կացարանի տարածութունը վորոշվում է կամ բնակվարձի փաստաթղթերից, կամ հարցման միջոցով: Կասկած առաջանալու դեպքում, կամ բնակչից տարածութեան մասին տեղեկութուն ստանալը անհնարին լինելու դեպքում, ցուցակագրողը թեկուզ և քայլերով չափում է տարածութունը:

Յեթե տարածութեան մասին տեղեկութուններ ստացված է քառակուսի արչիներով, այդ դեպքում մինչև դրանցում

կատարելը անհրաժեշտ է վերածել այդ քառ. մետրերի (քառանկ 2-ի վրա):

11, 12, 13 սյունակները լրացվում են բնակարանային քարտի (ձև 2) առաջին հարցացուցակի 8-րդ սյունակում արած նշումներով բնակիչները հաշվառման յենթարկելու միջոցով:

14-րդ սյունակում ցույց է տրվում կազմված բնակարանային քարտերի թիվը (տես բնակ. քարտ. կազմելու հրահանգի 1-ին կետը):

Յեթե տվյալ կացարանում բնակարանային քարտ չպետք է կազմվի (կացարանը բնակութեան համար չէ գրադեցված), այդ դեպքում 14-րդ սյունակում նշվում է «վոչ»:

Ձեզ № 8

Հ Ս Խ Հ

Հաստատված է ԹՅԶ-ի վարչութ-  
յան կողմից  
1932 թ. մարտի 14-ին Յերևան.

ԿՈՍՏՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՃՈՂՈՎՈՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

ՀՐԱՀԱՆԳ.

Բնակարանային ֆարտ (ձև № 2) րացմելու համար

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ.

1. Բնակարանային ֆարտը լրացվում է ամեն մի ինքնու-  
րույն վարձողի համար, վորը զբաղեցրել է կացարան բնակա-  
րանի համար:

2. Վարձող կոչվում է այն անձնավորությունը, վորն ան-  
միջականորեն տանտիրոջից վերցրել է բնակելի տարածու-  
թյուն վարձով կամ ձրիաբար նստելու իրավունքով: Տանտի-  
րոջ գրաված տարածությունը ևս պետք է նկատի ունենալ  
վորպես առանձին բնակտարածություն և լրացնել ֆարտը:

3. Մի սենյակում ապրող բնտանիքներից յուրաքանչյու-  
րը, յեթե անկախաբար է վարձում բնակտարածությունը  
տանտիրոջից, ապա զբանցից յուրաքանչյուրի համար լրաց-  
վում է առանձին բնակարանային ֆարտ:

4. Իսկ յեթե մի վարձողից բնակտարածություն վար-  
ձում են ուրիշները (յենթավարձող) և վարձը վճարում են  
նրան, առանց տանտիրոջ հետ կապ ունենալու, ապա այդպի-  
սինեբը ինքնուրույն վարձողներ չեն համարվում և նրանց  
համար առանձին բնակարանային ֆարտ չէ լրացվում:

5. Ինքնուրույն վարձողներ չեն համարվում նաև նրանք,  
վորոնք ապրում են վարձողի զբաղեցրած բնակտարածության  
վրա և նրա հետ ծախսի ընդհանուր բյուջե ունեն (աղբական,  
գիշերոթիկ և այլն):

6. Վարձողներում, հոյիկներում (չալաչ), տոնիկներում  
(բուդկա), առանձին գետնավորերում (գեմլյանկա), հըն-

ձաններում, ժամանակավոր բարակներում և այլուր ապ-  
րողների համար պետք է լրացնել բնակարանային ֆարտ:

Այդպիսի ֆարտերի վրա լրացվում է միմիայն հասցեյի  
մասն ու առաջին հարցի աղյուսակը: Մնացյալ հարցերը չեն  
լրացվում և այդ հարցերի ամբողջ յերկարությունը գրվում  
է՝ վաղոն, տոնիկ, գետնավոր և այլն, իսկ հարցաթերթի աջ  
անկյունում գրվում է «առանց շենքի» շենքի № հարցի դիմաց:

7. Բարաի վերևում «կարվածաթերթ №» հարցի դիմաց  
պետք է գրել այն կարվածքի ըստ կարգի համըը, վորով կա-  
վածքը ցուցակազրված է կարվածացուցակում:

8. «Շինության №»-ի պատասխան պետք է գրել կա-  
վածաթերթում 13-րդ հարցի աղյուսակում տվյալ շինության  
հատկացված հերթական համարի հիման վրա:

9. «Կացարան №»-ի պատասխան նույն ձևով պետք է  
գրել կարվածաթերթի № 15-րդ հարցի աղյուսակի պատաս-  
խանի հիման վրա:

10. Հրահանգչական, ցուցակազրական շրջան և շինարա-  
րական թաղ № հարցերին պետք է պատասխանել համաձայն  
հրահանգչից ստացած ցուցմունքների:

11. Հասցեյի մասը լրացվում է այնպես, ինչպես կա-  
վածաթերթում (ձև 1):

2. ՀԱՐՑԵՐԻ ԼՐԱՏՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ

Հարց 1-ին. Առաջին հարցի ցուցակը մտցվում են վար-  
ձողի բնակտարածության մեջ ապրող բոլոր այն բնակվող-  
ները, վորոնք մշտապես ապրում են տվյալ քաղաքում, այ-  
սինքն կապված են այդ քաղաքի հետ աշխատանքով, թեկուպ  
և սեզոնային, ծառայությամբ, ուսմամբ և այլ զբաղմունք-  
ներով կամ այդ քաղաքում սովորական ապրելու բերումով:  
Ըստ այնմ ցուցակի մեջ են մտցվում նաև քաղաքից ժամա-  
նակավոր բացակյողները (գործուղման պատճառով, բուժ-  
ման, սովորելու կամ այլ նպատակով), վորոնք սակայն սո-  
վորաբար ապրում են ցուցակազրվող կացարանում:

բ) Յեվ, ընդհակառակն, բնակիչների ցուցակի մեջ չեն  
մտցվում ժամանակավորապես տվյալ քաղաքում գտնվող  
անձնավորությունները, ինչպես, որինակ՝ գործուղման մեջ  
գտնվողները, համազումարի և կոնֆերանսների պատգամա-

վորոնքը, կուրորտնիկները և ուրիշները, վորոնց մշտական բնակավայրը այլ տեղ է :

2-րդ սյուևակ. Առաջինը գրվում է կացարանը վարձողի ազգանունը, անունը, հետևյալ տողերում վարձողի խնամքի տակ գտնվող ընտանիքի անդամների, հետո նրա ընտանիքի ինքնագործ անդամների և նրանց խնամքի տակ գտնվողների՝ յուրաքանչյուրինը առանձին : Վերջում գրվում են կողմնակի անձինք (գիշերօթիկներ, սպասուհիներ, յենթավարձողներ և այլն), վորոնք ապրում են վարձողի բռնած տարածության վրա :

3-րդ սյուևակ. ա. Այս սյունակում կարող են կատարվել հետևյալ գրանցումներից մեկն ու մեկը՝ 1) «յուր միջոցներով» կրճատ «ինք» և 2) խնամքի տակ, կրճատ «խնամք» ուրիշ այլ գրանցում չի թույլատրվում :

գ) Ըստ այնմ, յեթե նրանք (խնամքի տակ գտնվողները) ունի սեփական վաստակ (աշխատանքից, ծառայությունից, արհեստից) կամ մի վորեւե այլ ինքնուրույն ապրուստի միջոց (թոշակ, ստիպենդիա, ալիմենտ, տնից յեկամուտ և այլն) :

դ) Վաստակ և ինքնուրույն ապրուստի միջոց չունեցող անձնավորությունները (որինակ՝ փոքրահասակ յերեխաներ, տնտեսուհիներ, աշակերտներ, վորոնք ստիպենդիա չեն ստանում և չեն ծառայում, առանց թոշակի և վաստակի հաշմանդամները), վորոնք ապրում են ուրիշներին միջոցներով, համարվում են նրանց խնամքի տակ գտնվողներ :

դ) Ըստ այնմ, յեթե նրանք (խնամքի տակ գտնվողները) ապրում են իրենց խնամակալների հետ, —նույն 3-րդ սյունակում «խնամք» նշումից հետո գրվում է այն համարն ըստ կարգի, վորի տակ բնակիչների ցուցակում գրված է նրանց խնամակալը. որ. «Ո՞ր . . . . —ի «խնամքի տակ» . նման խնամվողների նկատմամբ 4, 5 և 6-րդ սյունակները չեն լրացվում (գծվում են) : Յեթե խնամակալը բնակիչներին ցուցակում չի գրանցվում, —3-րդ սյունակում նշվում է «խրճումք», իսկ 4, 5 և 6-րդ սյունակներում խնամակալի մասին : տեղեկություններ են գրվում :

Մի քանի խնամակալների խնամքի տակ գտնվող անձնավորությունները գրվում են նրանցից մեկի վրա :

4-րդ սյուևակ. ա) Ճիշտ կերպով նշվում է այն դրադմունքը (կատարվող աշխատաբը, դրադեցրած պաշտոնը կամ

արհեստը), վորից հաշվառվող անձնավորությունը վաստակ կամ յեկամուտ ունի : Յեթե տվյալ անձնավորությունը վաստակ տվող դրադմունք չունի, սակայն ունի սեփական ապրուստի միջոց (թոշակ, ստիպենդիա և այլն) գրվում է «թոշակառու», «ստիպենդիանտ» և այլն :

բ) Յեթե ցուցակագրվողը մի քանի դրադմունք ունի, կամ դրադմունքի հետ ունի մի այլ ապրուստի միջոց (որինակ՝ ծառայություն ու ստիպենդիա, վարձու աշխատանք ու թոշակ և այլն), այդ դեպքում գրվում է դրանցից գլխավորը, այսինքն տվյալ անձնավորության ապրուստի գլխավոր միջոց հանդիսացողը :

գ) Զբաղմունքի անունը պետք է ձիշտ նշել, վորպեսզի գրանցումից կարելի լինի պարզել, թե տվյալ անձնավորությունը ինչ աշխատանք է կատարում : Զպետք է թույլ տալ անորոշ նշումներ, ինչպես, որինակ՝ «մետաղագործ», «կառուցող», «արհեստավոր» և այլն : Պետք է մատնանշել և՛ պաշտոնը և՛ մասնագիտությունը, որինակ՝ «խառատ-մետաղագործ», «փականագործ-ինստրումենտալլչիկ», «քարտաչ», «ատամնարույժ» և այլն :

դ) Արտագրության մեջ աշխատող աշակերտների ու ձեռքի տակ աշխատողների նկատմամբ չի կարելի գրել՝ «աշակերտ» կամ «ձեռքի տակ», այլ անպայման պետք է մատնանշել սովորելիք արհեստը, որինակ՝ «աշակերտ-փականագործ», «ձեռքի տակ-խառատ» : Նույնանման գրանցումներ արվում են Փարզործուսի և շինուսի աշակերտների նկատմամբ :

ե) Տեվականորեն վորոշ սևագործ աշխատանք կատարող սևագործ բանվորները պետք է նշեն իրենց աշխատանքի բնույթը և վոր թե գրվեն «սևագործ» : «Սևագործ» անվան տակ պետք է գրել նրանց, վորոնք կատարելով վարձու աշխատանք, վորոշ մասնագիտություն չունեն և վարձողի մոտ կատարում են տարբեր բնույթի աշխատանքներ :

5-րդ սյուևակ. ա) Նշվում է դրությունը այն դրադմունքի մեջ, վորը ցույց է տրված նախորդ սյունակում : Այդ սյունակը լրացնուց «բանվոր» և «ծառայող» պետք է գրել միմիայն վարձու աշխատողներին, այսինքն իրենց աշխատանքի համար աշատավարձ ստացողներին :

բ) Վարձով աշխատող անձնավորությունների նկատմամբ, այն է՝ մասնավոր պրակտիկայով դրադվող բժիշկների համար աշխատավարձ ստացողներին :

րի, մասնավոր դասեր ունեցող ուսուցիչներին, յերաժիշտներին, իրենց արհեստանոցներում, տանը, կամ արտազնաց անասազորներին ու արհեստավորներին (վորոչ ժամանակով չվարձվողներ, աշխատանքը պատվերով կատարողներ), սայլապանութեամբ, կառապանութեամբ զբաղվողներին, գյուղական անտեսութեամբ զբաղվողներին, մասնավոր առևտրականներին և այլն — պետք է նշել՝ «արտելի անդամ» կամ «կոլտոզի անդամ», յեթե կոտպերացված է, յեթե արտելի անդամ չէ, — «ինքնուրույն», «միայնակ» «առանց վարձու բանվորների գործատեր» «վարձու բանվորներով գործատեր»:

գ) Վոչ զբաղմունքային ապրուստի միջոցներ ունեցողների նկատմամբ, վորոնց համար 4-րդ սյունակում արված է համապատասխան նշում («ստիպենդիանտ», «թոշակառու», «տանտեր») 5-րդ սյունակը չի լրացվում և գիծ է քաշվում:

6-րդ սյունակում. ա) Ֆույց տալ աշխատանքի վայրը, այսինքն հիմնարկի կամ ձեռնարկի անունը և արտադրութեան տեսակը, որ. «Միայնատի դործարան» «Կարբիտի գործարան» և այլն: Վոչ վարձու աշխատանքով զբաղվածների նկատմամբ — «Յերկոչ արտել» «յուր խանութը» և այլն:

բ) Ըստ այնմ պետք է ցույց տալ այն ձեռնարկությունը, վորում աշխատում է և վոչ թե այն միավորումը, վորի մեջ մտնում է այդ ձեռնարկությունը:

Բազմական չի, որինակ, ցույց տալ «Լեռչինարդ» տրեստում, պետք է ճիշտ գրել «Լեռչինարդ տրեստի Մարմարի գործարան» կամ «Կրի գործարան»:

7-րդ սյունակ. Այդ սյունակում գրվում է բոլոր տեսակի դրամական յեկամուսների ընդհանուր գումարը (վաստակ, տնից յեկամուտ, թոշակ, ստիպենդիա և այլն): Վոչ դրամական յեկամուտը (բնականով) հաշվի չի առնվում: Վաստակը, կամ յեկամուտը նշվում է ընտանիքի յուրաքանչյուր ինքնագործ անդամի համար, ըստ վորում յեկամտի ընդհանուր գումարի մեջ մտցվում են այդ ամսվա համար հասանելի բոլոր գումարները, թեկուզ և տվյալ ամսում դրանցից մի մասը կամ ամբողջը դեռևս ստացված չլինի:

8-րդ սյունակ. Պետք է ցույց տալ տվյալ անձն այդ նույն բնակարանում մշտապես և ապրում, թե ժամանակավորապես:

ԾԱՆԹՈՒԹՅՈՒՆ.— Չպետք է մոռանալ, վոր քաղաքում ժամանակավոր ապրողները (տես հարց 1-ին բ):

կես) բնակարանի բնակիչներին հաշվի մեջ նկատի չեն առնվում: Այստեղ «ժամանակավոր» պատասխանը, վոչ թե վերաբերում է այդպիսիներին, այլ տվյալ քաղաքի այն մշտական բնակիչներին, վորոնք իրենց հատուկ բնակարան չունենալու հետևանքով ժամանակավորապես ապրում են տվյալ բնակարանում:

Հարց յերկրորդ.— Մի ամբողջ տուն վարձել և վարձակալել իրար հետ չպետք է շիտթել:

Վարձակալ (արենդատոր) է նա, ով վարձելով միասին կատարում է տանտիրոջ պարտականությունները (նորոգում, հարկեր վճարել և այլն), իսկ վարձող նա յե, ով միայն բնակվարձ է վճարում:

3-րդ և 4-րդ հարց. ա) Ըստ իրենց նշանակութեան բնակելի սենյակներին շարքը պետք է դասել բնակելի տիպի բոլոր սենյակները, անկախ նրանից, թե ատենը կառուցելիս նրանք նշանակված են յեղել բնակութեան համար, թե հետո վերափոխված են (վերահասուցված ու հարմարեցված) բնակութեան համար վոչ բնակելի կացարանից:

բ) Այդ պատճառով ըստ յուր նշանակութեան բնակելի սենյակի համարվելու յե նաև նախկին խոհանոցը, յեթ նա վերակառուցման հետևանքով կորցրել է յուր սկզբնական նշանակությունը (քանդված է պլիտան և այլն): Նույն հիմունքներով և խանութների աչքերը կորցնում են իրենց նախկին նշանակությունը և բնակելի սենյակ են դառնում, յեթե բնակութեան համար վերափոխելու հետևանքով նրանք ստանում են համապատասխան տեսք (դրսի պատը բարձրանում է, խանութի աչքի տեղ լուսամուտներ են չինված, փողոցից անցքը փակված է և այլն) ու առանց հիմնական վերակառուցման չի կարող կրկին ոգտագործվել իբրև խանութ:

գ) Յեվ, ընդհակառակն, յեթե ըստ իրեն նախնական նշանակութեան վոչ բնակելի տեղարանն առանց հիմնական վերափոխման կամ վերաշինման, թեկուզ և տարիներով ոգտագործվել է բնակութեան համար — նա այդ դեպքում մնում է վոչ բնակելի ըստ յուր նշանակութեան և այդ նախնական նշանակությունը 4-րդ հարցում նշվում է:

դ) Գյուղական տիպի թնրատները, մասնաները և նման այլ տեղարանները բնակելի սենյակ չպետք է հաշվել, չնայած, վոր ընտանիքն ամբողջությամբ այնտեղ է ապրում:

ե) Սենյակը համարվում է «մասամբ զբաղված» այն

դեպքում, յերբ մեկ սենյակում ապրում են յերկու կամ ավելի  
ինքնուրույն վարձողներ, վորոնք անմիջականորեն վճարում  
են տանտիրոջ միմիայն իրենց կողմից դրադեցրած սենյակի  
մասի վճարը: Ինակելի տարածութեան վերաբերող հարցին  
պատասխանելիս ցույց ե տրվում իրենց սենյակի այդ վճար-  
վող մասի տարածութեանն ու վոչ ամբողջ սենյակի:

9-րդ հարց. Տվյալ հարցը նպատակ ունի պարզել այն  
դեպքերը, յերբ այս կամ այն բնակիչը հանդիսանալով տան-  
տիրոջ նկատմամբ ինքնուրույն վարձող, փաստորեն չի դա-  
ղեցնում վորոչ բնակելի տարածութեան, այլ ապրում ե ընդ-  
հանուր խոհանոցում (լողարանում, մառանում և այլն), իսկ  
նույն այդ խոհանոցով ոգտվում են բնակարանի մյուս ապ-  
րողները: Այդպիսով, յեթե բնակիչը ապրում ե խոհանոցում  
(թեկուզ և բնակութեան համար չհարմարեցրած), բայց այդ  
խոհանոցով ուրիշները չեն ոգտվում, — այդ սենյակը (նախ-  
կին խոհանոցը) համարվում ե բնակված կացարան և 9-րդ  
հարցում գրվում ե «վոչ»:

Այն դեպքերում, յերբ բնակելի կացարան դրադեցրած  
վարձակալի բնտանիքի անդամներից վորեւ մեկը (կամ սղա-  
սուհին) փաստորեն ապրում ե ընդհանուր խոհանոցում (լո-  
ղարանում, մառանում) այդ խոհանոցն իրեւ բնակելի սե-  
նյակ, չպետք ե ընդունել և այնտեղ գիշերողներին պետք ե  
հաշվել բնակելի սենյակի բնակիչներին հետ:

10-րդ հարց. Միջանցիկ սենյակ համարվում ե այն դեպ-  
քում, յերբ նրանով անցնելու համար ոգտվում են ուրիշ  
(հարեան) կացարանի բնակիչները:

12-րդ հարց. Ցույց ե տրվում տաքացման այն սիստեմը,  
վոր կա տվյալ կացարանում, անկախ նրանից, թե վարձողը  
տաքացման տվյալ սիստեմից ոգտվում ե թե վոչ: Արինակ՝  
յեթե կացարանում կա պատի փառարան, սակայն վարձողը  
ինչ-ինչ պատճառներով տաքացնում ե թիթեղի կամ նավթի  
փառարանով, այդպիսի կացարանների նկատմամբ 12-րդ  
հարցում այնուամենայնիվ նշվում ե «պատի փառարան»:

13-րդ հարց. Այն հարցին, թե վարձողը ոգտվում ե հաշ-  
տով, ջրմուղով, արտաքնոցով և այլն, իրեւ ընդհանուր ո-  
րեւք, ցույց ե տրվում փաստական ոգտագործումը: Սակայն  
այն դեպքում, յերբ վարձողին իրավունք և հնարվորութեան  
ե տրվում թված հարմարութեաններից ոգտվել, բայց վար-  
ձողը այդ իրավունքը (ինչ-ինչ պատճառներով) չի ոգտագոր-

ծում, պետք ե այնուամենայնիվ համարել, վոր վարձողը  
այդ հարմարութեաններով ոգտվում ե:

բ) Մասնանշված հարմարութեաններով «առանձին» ոգ-  
տվելը համարվում ե այն դեպքում, յերբ դրանցով ոգտվում  
ե միմիայն վարձողը և նրա կողմից վարձած կացարանում  
ապրողները (առանց ուրիշ կացարանի բնակիչների):

Յեթե մի սենյակի վարձողները մի քանի հոգի յեն և ու-  
նեն միմիայն մի ուղիտ (լինի միայն մեկի սեփականութեան  
կամ ընկերովի), պետք ե միայն մեկ հարցաթերթիկ վրա  
գրել ուղիտ ունի, իսկ մյուսներին վրա՝ «ոգտվում ե»:

Հ Ս Խ Հ  
 ԿՈՍՏՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
 ՓՈՂՈՎԱԴՐՎԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՍ

Ձևի № 14  
 Հաստատված է Պետականի ԺՏՀ  
 Վարչության կողմից  
 1932 թ. մարտի 13-ին.

**Հ Ր Ա, Հ Ա Ն Գ**

Հասարակական կուլսկենցաղային հաստատությունների հարցաթերթերը լրացնելու համար

**Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ.**

1. № 6 ձևի հարցաթերթը լրացվում է քաղաքի հաշվառումը ղեկավարող անձնավորության անմիջական ցուցմունքներով:

2. № 6 ձևի հարցաթերթը կազմվում է այն հասարակական կուլտ-կենցաղային հաստատությունների համար, վորոնք բնակարանային հաշվառման ընթացքում գրանցված են կալվածաթերթի (ձև № 1) 10-րդ հարցում:

Սակայն յեթե վերատուգման կարգով շրջադայությունների կհայտարարվեն ինչ ինչ պատճառներով կալվածաթերթը չմտցրած հասարակական կուլտ-կենցաղային հաստատություններ, այդպիսիք նույնպես յենթակա յեն հաշվառման № 6 ձևի հարցաթերթով:

3. Հասարակական կուլտ-կենցաղային հաստատության հասկացողությունը տրված է «կալվածաթերթը լրացնելու հրահանգի» հարց 10-ում: Ըստ այնմ պետք է նկատի ունենալ, վոր այդ հաստատության աշխատանքների մեջ տեղի ունեցող ժամանակավոր ընդհատումները (վերանորոգում, սեղոնայնություն և այլն) հաշվի չեն առնվում, և նման հաստատությունները գործողների հետ միասին ընդհանուր հիմունքներով ցուցակազրվում են:

№ 6 ձևի սկզբի բոլոր տեղեկությունները և հասցեյի մասը մինչև 2-րդ կետը ներառյալ անմիջականորեն փոխադրվում

են տվյալ հասարակական կուլտ-կենցաղային հաստատության գտնված կալվածքի համար կազմված № 1 ձևից:

բ. Հրահանգ՝ առանձին հարցերը լրացնելու համար.

3-րդ, 4-րդ և 5-րդ սյունակներ: Սյունակներում, վորոնք կրում են «Հասարակական կուլտ-կենցաղային հաստատությունների անուն» վերնագիրը, ցույց է տրվում տվյալ հաստատության անունն ու բնույթը, համաձայն կցված որինակելի (ախպարական) ցուցակի ու նրա պարզարանման:

Կուլտ-կենցաղային հաստատության անունը	Պ ա Ր Ղ ա Բ ա ն ու մ ն
ա) Հասարակական վիացխ. տուն	Աշխատանքի բոլոր պրոցեսները մեքենայացված են:
1. Մեքենայացված վացքատուն:	
2. Կիսամեքենայացված վացքատուն:	Աշխատանքի պրոցեսների մի մասը (որ. չհրացումը, մզումն և այլն) մեքենայացված է, իսկ մյուս մասը կատարվում է ձեռքով:
3. Ձեռքի վացքատուն:	Աշխատանքի բոլոր պրոցեսները կատարվում են ձեռքով:
բ) Հասարակական սնունդ	
4. Սոհանոց ճաշարանով (սեղանատնով):	Այսպես նշվում է այն դեպքերում, յերբ ճաշի մի մասը տուն է բաց թողնվում:
5. Սոհանոց առանց ճաշարանի (սեղանատան):	Ճաշի բոլոր տուն են բաց թողնվում (փակ յոհանոց):

6. Ճաշարան (սեղանատուն) առանց խոհանոցի:	Ճաշարան (սեղանատ.), ուր պատրաստ ճաշը բերվում է ուրիշ խոհանոցներից, կամ խոհանոց գործարանից:
-----------------------------------------	--------------------------------------------------------------------------------------------

գ) Հասարակական լոգացում 7. Դուռ:	Յերբ կա միայն ցնցուղ:
----------------------------------	-----------------------

8. Ծորակներ:	Յերբ կան միայն տաք և սառը ջրի համար ծորակներ, կամ մեկ ծորակ, վորից միաժամանակ կարելի չէ և տաք և սառը ջուր ստանալ (խառնուրդող ծորակ):
--------------	--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

9. Լոգարան (վաննայա):	Մեկ, կամ մի քանի լոգարանով կացարան:
-----------------------	-------------------------------------

10. Ավազան:	Ավազան կոչվում է այնպիսի լոգարան, վորտեղ միաժամանակ կարող են լողանալ մի քանի մարդ:
-------------	------------------------------------------------------------------------------------

Յեթի հասարակական լոգարանների վերը թված անսակները (7, 8, 9, 10 համար) պատահում են զուգակցած ձևով (ը. դուռ և ծորակներ, ծորակներ և լոգարաններ և այլն), 3, 4, 5 սլունակներում հետևյալ կերպով ցույց տալ՝ «Դուռ և ծորակներ», «Լոգարան և ծորակներ», «Ավազան, դուռ և ծորակներ» և այլն:

դ) Մտնելիքներ	
11. Սովորական մանկատներ:	Մանկիկներին 0—3 տարեկան հասակ ունեցող յերեխաների համար, վորտեղ նրանք կարող են որվա ընթացքում 3 ժամ մնալ:

12. Յերկարացված որով մանկատներ:	Նույնն է ինչ վոր 11-ը կետում, սակայն որվա ընթացքում մանուկների այնտեղ մնալու տևողությունը հասնում է 10-ից 12 ժամ:
---------------------------------	-------------------------------------------------------------------------------------------------------------------

13. Ամբողջ որվա (գիշերոթիկ) մանկատներ:	Նույնն է, ինչ վոր 11 և 12 կետերում, սակայն յերեխաներն այդտեղ մնում են ամբողջ որ ու գիշեր:
----------------------------------------	-------------------------------------------------------------------------------------------

14. Մանկահրապարակ:	4—7 տարի հասակ ունեցող յերեխաների համար ամառը աշխատող կուլտ-կենցաղային հիմնարկություն:
--------------------	----------------------------------------------------------------------------------------

15. Մանկըջախ և պարտեզ:	4—7 տարի հասակ ունեցող յերեխաների կուլտ-կենցաղային հիմնարկ, ուր յերեխաները մնում են որվա ընթացքում և ստանում են նախադպրոցական դաստիարակություն, այստեղ յերեխաներին տրվում է տաք նախաճաշ:
------------------------	------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

ե) Մուս կուլտ-կենցաղային հիմնարկություններ

- |                            |                                                                                                       |
|----------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------|
| 16. Ագուլթ, անկյուն:       | 1. Գրքեր տուն բաց թողնող կուլտ-կենցաղ. հիմնարկութ.                                                    |
| 17. Գրադարան:              | 2. կուլտ-կենցաղային հիմնարկության գրքերից, հանդես և բրից, թերթերից և այլն ողտվում են հենց կացարանում: |
| 18. Ընթերցարան:            |                                                                                                       |
| 19. Գրադարան-ընթերցարանով: |                                                                                                       |
| 20. Ռադիո-սարքավորում:     |                                                                                                       |
| 21. ....                   |                                                                                                       |
| 22. ....                   |                                                                                                       |

Այս ցուցակն որինակելի (տիպարական) է, ուստի և, յի-  
թե լինի այստեղ նախատեսված կուլտ. կենցաղ. հիմնարկներ,  
անհրաժեշտ է ճիշտ թվել այդ մոտավորապես այնպես, ինչ-  
պես վոր թված է 1-20 ցուցակում :

11-րդ կետ. Այստեղ ցույց է տրվում ավյալ կուլտ-կեն-  
ցաղային հիմնարկութ.յունը (տարողութ.յունը նրա լրիվ բեռ-  
նավորման դեպքում : Նկատի ունենալով այն, վոր տարբեր  
կուլտ-կենցաղային հիմնարկների տարողութ.յունը չափելու.  
համար միավորները կարող են տարբեր լինել (խոհանոցի հա-  
մար ճաշերի քանակը, բվացքատան համար արտադրվող չո-  
բացած սպիտակեղենի քաշը, լողարանների համար լողա-  
ցողների քանակը և այլն), այլև հաշվի առնելով այն, վոր  
այդ հիմնարկների հաշվետվութ.յան դրութ.յունը հնարավո-  
րութ.յուն չի տա միշտ պահպանել տարողութ.յան համար  
սահմանված սիտեմի ցուցանիշները, — այդ հարցերին պա-  
տասխանելիս պետք է մանրամասն կերպով ցույց տալ թե ինչ  
չափերով է տրված, որինակ՝

ա) ճաշարանով (սեղանատնով) խոհանոցի համար ցույց  
տալ «որական 100 ճաշ և 50 ընթրիք» :

բ) Լվացքատան համար—«80 կիլոգրամ չորացրած սպի-  
տարողութ.յուն 10 լողացող» :

դ) Հասարակական լողարանների համար՝ «միանվագ  
տարողութ.յուն 10 լողացող» :

դ) Մանկ. հիմնարկների համար—«միանվագ տարողու-  
թ.յան» 60 յերեխա,

ե) Ընթերցարան միանվագ ընթերցողներ 20 հոգի :

զ) Գրադարան—գրքերի թիվը :


№ 6. կետ Հաշվի յե առնվում կուլտ-կենցաղային հիմ-  
նարկի դրազեցրած կացարանի տարածութ.յունը, առանց  
ոժանդակ մասերի (միջանցքներ, հաշտ, արտաքնոց, մառան  
և այլն) : Յուրաքանչյուր առանձին դեպքի համար կոնկրետ  
կերպով պետք է վորոշել տարածութ.յունը հիմնական է թե  
ոժանդակ : Որինակ՝ հասարակական սննդի կուլտ-կենցաղա-  
յին հիմնարկի համար, խոհանոցի տարածութ.յունը հիմնա-  
կան է և հաշվի յե առնվում № 6 կետում, մինչդեռ նույն  
տարածութ.յունը (խոհանոցի) մանկապարտեզի համար՝  
ոժանդակ հանդիսանալով՝ հաշվի չի առնվում :

ՄԱՆՈՒԹՅՈՒՆ.—Տարածութ.յունը անպայմա-  
նորեն տրվում է քառ. մետրերով և լրիվ միավորներով :

Կիսից քիչ կոտորակը հաշվի չի առնվում, իսկ կեսը և  
կիսից ավելին համարվում է մեկ :

№ 7 կետ. Յեթե կուլտ-կենցաղային հիմնարկին կից կա  
պարտեզ, հրադարակ, պետք է ցույց տալ «պարտեզ», «հրա-  
պարակ» և այլն :

№ 8 կետ. Յույց պետք է տալ թե ո՞վ է սպասարկում  
ավյալ կուլտ-կենցաղային հիմնարկը՝ ա) իրենք՝ բնակիչ-  
ները՝ հասարակական բեռնավորման կարգով. բ) վարձու  
աշխատողներ (վճարովի) կամ թե գ) խառն սպասարկում  
(բնակիչներ և վարձու աշխատողներ միասին) :



ՀՐԱՀԱՆԳ.

Վերստուգողական թերթիկների  
(Ձեկ № 3, 7, 8) լրացման.

1. Ձեկ № 3

- 1.—Ցուցակագրողն իր ցուցակագրական չըջանը չըջա-  
գայելու և կարվածաթերթիկները լրացնելու հետ մեկտեղ,  
լրացնելու յե նաև ձև № 3 ցուցակագրողի վերստուգողական  
թերթիկը:
- 2.—Նախքան կարվածաթերթ (ձև № 1) լրացնելը ցու-  
ցակագրողը հրահանգչից ստացած պլանի և տնացուցակի հի-  
ման վրա ճշտում և փոփոցի անունը, կարվածքի № և լրաց-  
նում է ձև № 3 կարվածացուցակի № 1-4 հարցերը: Այդ  
աշխատանքից հետո նա սկսում է լրացնել կարվածաթերթեր,  
քնակարանային և այլ քարտերը:
- 3.—Շրջագայությունն ավարտելուց հետո աշխատանքից  
ազատ ժամերին որսորդե լրացնում է նույնպես ձև №  
3-ի 5-8 հարցերը:
- 4.—Չպետք է մոռանալ, վոր կարվածացուցակում պետք  
է գրել և այն կարվածների անունները, վորոնց համար կար-  
վածաթերթիկ չի կազմվելու, այն է՝ շինություն չունեցող,  
վոչ կառուցված կարվածների:
- 5.—Վոչ կառուցված կարվածներ պետք է համարել վոր-  
ևե նշանով (պատ, ցանկապատ, առու, թումբ, թուփ) սահ-  
մանադժված տարածությունը, վորի վրա վոչ մի կառուցում  
չկա, որինակ՝ այգի, բանջարանոց, տնատեղ, բաց փայտի  
պահեստ և այլն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Այդպիսի կարվածներում չե-  
ղած պահանջների տոնիկը, հոլիկը, շախչը, ժամանակա-  
վոր բարակները և այլն իրեն կատուցում չեն համար-  
վում:

6.—Վոչ կառուցված կարվածքների համար չեն լրացվում  
5-7 հարցերը, իսկ 8-րդ հարցում գրվում է «կարվածաթերթ  
չի կազմված»:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Կարող է պատահել, վոր ավայ  
կարվածքում տոնիկում, շախչում, հոլիկում, ժամանա-  
կավոր բարակում, վրանում ապրեն մարդիկ: Համաձայն  
№. 1 հրահանգի №. 6 հարցի նրանց համար լրացվում է  
քնակարանային քարտ, այդպիսիների վերաբերմամբ  
5-րդ սյունակում պետք է գրել կազմված քարտերի թի-  
վը:

7.—Յեթե մի թերթիկ (50 սող) չբավե, այդ գեղքում  
կցվում են նոր թերթիկները, իսկ առաջին թերթիկի վրա  
գրվում է «չարունակելի», իսկ ամենավերջինի վրա՝ «վերջ»:

8.—Սյունակ 2 և 3 լրացնելիս, յեթե փոփոցն ու տունը  
համար չունեն, պետք է գրել այն անուններով ու համարներով  
վորով այդ տան քնակիչներն ոգտվում են փոստային հարա-  
բերությունների ժամանակ:

9.—Սյունակ №. 3-ում գրվում է կարվածքի տիրոջ ա-  
նունը, համաձայն կարվածաթերթի հրահանգի յերկրորդ  
հարցի պատասխանի:

10.—Սյունակ №. 4-ում կառուցում ունեցող բոլոր կար-  
վածքների համար պետք է պատասխանել «այո» և լրացնել  
կարվածաթերթ, իսկ յեթե կառուցում չունի (տես վերև 5-րդ  
կետ) պետք է գրել «վոչ» և չլրացնել կարվածաթերթը:

11.—Սյունակ 5-րդում գրվում է կազմված քնակարա-  
նային քարտերի թիվը, յինի կառուցված կարվածքներում յե  
վոչ կառուցված կարվածքներում:

12.—Սյունակ 6-րդին պատասխանելու համար պետք է  
ձև №. 2-ի (քնակարանային քարտ) 3-րդ և 4-րդ սյունակ-  
ների ավլայները գումարել ու այդպիսով ստանալ պատաս-  
խանը:

13.—Սյունակ 7-ում նույն ձևով պետք է գրել և այն  
հարցաթերթիկի կետ 1-ի աղյուսակում ցուցակագրված  
մարդկանց յեթիվը:

14.—Սյունակ 7-ում պետք է գրել միմիայն այն բնա-

կարանային բարտերի ավյալները, վարանց կես 1-ի ազգա-  
սակի 5-րդ սյունակում գրված է «բանվոր»:

15.—Սյունակ 7 լրացնելու համար միաժամանակ պետք է  
ե այլ բարտերի հարց 3-րդ և 4-րդ ավյալները գումարել և  
գրել սյունակ 6-ում:

16.—Առանձին կալվածաթերթերը ձև № 3-ում.  
անցկացնելուց հետո պետք է ուշիուշով դիտել թե արդյոք  
ձև № 1-ի, 2-ի և 3-ի ավյալներն իրար դուզափոխում են, թե  
վոչ, և թե արդյոք վորեւե հարցի լրացումը բաց չի թողնված,  
կամ սխալ չի լրացված, փորպետի հանրող շրջագայության  
ժամանակ ուղղվեն:

17.—Յերբ ցուցակագրական շրջանի աշխատանքները  
լիովին ավարտված ու բոլոր կալվածաթերթերը Ձևի №  
3-ում անցկացված են, պետք է Ձև № 3-ի գումարները  
տալ և ստորադրել: Գումարման ժամանակ 4-րդ սյունակի  
ներքևում համարիչով պետք է գրել կառուցված, իսկ հայտա-  
բարով՝ չկառուցված կալվածքների թիվը:

18.—Յեթ մի ցուցակագրողը լրացրել է մի քանի ցուցա-  
կագրական շրջան, այս դրանցից ամեն մեկի համար պետք  
է լրացնել առանձին ձևի № 3, իսկ յեթե ինքն ողնել է մի  
ուրիշ ցուցակագրողի, այլ ղեպքում առանձին թերթիկ  
չպետք է կազմել, այլ մեկ հատ, իսկ դրամական հաշիվները  
նրանք իրար հետ վերջացնում են:

Չպետք է մոռանալ, վոր ձև № 3-ը հանդիսանում է դրա-  
մական հաշիվավության ղոկումենտ և նրա հիման վրա յե  
վոր միայն գրամական հաշիվները կատարվում են:

19.—Հրահանգիչներն ու ղեկավարները ցուցակագրողներին  
հետ հաշիվը փակում են միմիայն այն ժամանակ, յերբ բոլոր  
նյութերը ընդունել են և քննադատությունը ավարտել են:

## 2. Ձև № 7

20.— Ձև № 7-ը լրացնում է հրահանգիչը:

21.—Ձև № 7-ը լրացվում է համաձայն ձև № 3-ի հրա-  
հանգի (տես վերև կես 8-15) միայն այն տարբերությամբ,  
վոր սյունակները 2-3-ի փոխարեն կալվածքի հասցեն ու  
տերը) գրվում են շինարարական թաղերի (ցուցակագրական  
շրջանների) №№-ները:

22.—Մնացած սյունակների պատասխանը պարզապես  
տրտագրում են ցուցակագրողի ձև № 3 թերթից:

23.—Շրջանային ղեկավարը նույն ձևով կազմում է իր  
կացվում է մի տող:

24.—Բոլոր ցուցակագրական շրջանները ավարտելուց  
հետո նյութերի հետ միասին հանձնվում է ղեկավարին նաև  
ձև № 7, նախապես հանրագումարներ տալուց հետո:

## 3. Ձև № 8

25.—Շրջանային ղեկավարը նույն ձևով կազմում է իր  
հաշիվավությունը, միայն թե փոխանակ ցուցակագրական  
շրջանների, նշանակում է հրահանգչական շրջանները:

26.—Շրջանային ղեկավարի ղեկույցի մեջ ամեն մի քա-  
ղաքային վայրը պետք է գրել առանձին տողով:



30

1932p.-202

U92

3159